ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀՎԱ-ՀՄԱ-ԾՁԲ-19/35-1

ք. Երևան «26» հուլիսի 2019թ.

Վարչապետի աշխատակազմն, ի դեմս աշխատակազմի գործերի կառավարչի պաշտոնակատար Վահան Պապիկյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԼՈՌԵ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վերգինե Մովսիսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է սփյուռքի երիտասարդ առաջնորդների, ազգային պարի ուսուցիչների և երգչախմբերի խմբավարների այցի հետ կապված միջոցառման կազմակերպման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 24 980 000 (քսանչորս միլիոն ինը հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5

օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է **4** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Վարչապետի աշխատակազմ	«ԼՈՌԵ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ	ք. Ստեփանավան, Չարենցի 179/28
Կառավարական տուն 1	«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Հ/Հ 16033015694600
Հ/Հ 900011039063	ՀՎՀՀ 06952546
ՀՎՀՀ 02505554	
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
« 26» հուլիսի 2019թ. կնքված
N ՀՀՎԱ-ՀՄԱ-ԾՁԲ-19/35-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը
1	79951110/5	Մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայություններ, այդ թվում Սփյուռքի երիտասարդ առաջնորդների,ազգային պարի ուսուցիչների եվ երգչախմբերի խմբավարների այցի հետ կապված միջոցառման կազմակերպում	դրամ	24 980 000	1	Պատվիրատուի հետ համաձայնեցված հասցեներում	Օգոստոս-2019թ

Հ/Հ	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ
1	Սփյուռքի երիտասարդ առաջնորդների,ազգային պարի ուսուցիչների եվ երգչախմբերի խմբավարների այցի հետ կապված միջոցառման կազմակերպման նպատակով 2019 թվականի հուլիսի 21-ից օգոստոսի 3-ն ընկած ժամանակահատվածում «Հոլիդեյ ինն Էքսպրես» հյուրանոցային համալիրում ապահովում է մինչև 50 մասնակցի համար սենյակներ: Հյուրանոցը գտնվում է ՀՀ, ք.Երևան, Փավստոս Բուզանդի փող., 97/2 հասցեում, (Հանրապետության հրապարակից 1.2-1.5 կմ հեռավորությամբ): Հյուրանոցի ներկայացվող պահանջներն են՝ ոչ պակաս, քան 3 աստղ: Սենյակները պետք է լինեն հարմարավետ, ժամանակակից ոճով կահավորված, ապահովված շուրջօրյա տաք և սառը ջրամատակարարմամբ, կոմունալ հարմարություններով: Սենյակները պետք է նախատեսված լինեն 2-3 հոգու համար, ապահոված լինեն առանձին սանհանգույցներով, հեռուստացույցով, սառնարանով, հեռախոսով, սրբիչների հավաքածուով, հողաթափերով, օդորակիչով, ինտերնետից օգտվելու հնարավորությամբ: Դասընթացների կազմակերպումը և մասնակիցների առօրյան պետք է իրականացվի Մրցույթի հաղթողի կողմից մշակված և Պատվիրատուի հետ համաձայնեցված բովանդակային Ծրագրով: Այդ Ծրագիրը պետք է ունենա ուսուցողական, ժամանցային, ճանաչողական, մշակութային բաղադրիչներ, որոնց իրականացումը պետք է ապահովվի ոլորտային համապատասխան արհեստավարժ մասնագետների միջոցով և աջակցությամբ: Այդ մասնագետները պետք է լինեն 4-ը: Նրանք պետք է կազմակերպեն առաջնորդների, պարի ուսուցիչների և երգչախմբերի խմբավարների առօրյան, ապահովեն դասավանդողների և հյուրերի ներկայությունը և այլն՝ ըստ Պատվիրատուի կողմից հաստատված Ծրագրերի: Ծրագրերը պետք է ներառեն համապատասխան՝ մասնագիտական տեսական և գործնական դասընթացներ, հանդիպումներ, ժամանցային և մշակութային միջոցառումներ, պատմամշակութային այցելություններ: Ծրագրերի բոլոր բաղադրիչները պետք է իրականացվեն նշված մասնագետների ուղեկցությամբ և անմիջական մասնակցությամբ: Դասընթացների տևողության ողջ ընթացքում հաղթող կազմակերպությունը պատասխանատվություն է կրում մասնակիցների անվտանգության համար և ապահովում է շուրջօրյա բժշկական սպասարկում: Շուրջօրյա բժշկական սպասարկման համար Պատվիրատուն պայմանավորվածություն ձեռք կբերի ՀՀ առողջապահության նախարարության/Երևանի քաղաքապետարանի հետ: Երևանից դուրս ցանկացած ուղևորություն պետք է իրականացվի առաջին բուժօգնություն ցուցաբերող մասնագետի մասնակցությամբ, ինչպես նաև ճանապարհային ոստիկանության ուղեկցությամբ: Ճանապարհային ուստիկանության և բժշկի առկայությունը կապահովի Պատվիրատուն:

Վերը նշված ծրագրերի կրթական բաղադրիչը պարտադիր պետք է ներառի՝

1. 3 առանձին մասնագիտական դասընթացներ՝ նախատեսված երիտասարդ առաջնորդների, ազգային պարի ուսուցիչների, երգչախմբերի ղեկավարների համար՝ յուրաքանչյուրը՝ մինչև 12 օր, օրական՝ 4 ժամ /օրը՝ 12 ժամ/, ընդհանուր մինչև 144 ժամ տևողությամբ /4 ժամ*3 ուղղություն*12 օր:/ Դասընթացների բովանդակությունը և դասախոսների կազմի ընտրությունը պետք է իրականացվի Պատվիրատուի համաձայնությամբ: Դասընթացների կազմակերպման համար պետք է ապահովվի առաջնորդների դեպքում՝ համապատասխան լսարան, պարի ուսուցիչների և երգչախմբերի ղեկավարների դեպքում՝ 2 սրահ-դասասենյակ. առաջինը՝ երգի, երկրորդը՝ պարի դասընթացների անցկացման համար: Հնարավորության դեպքում լսարանն ու 2 սրահ-դասասենյակները պետք է գտնվեն նույն շենքում կամ իրարից ոչ հեռու գտնվող տարածքում, որոնք պետք է տեղակայված լինեն մասնակիցների բնակության հյուրանոցից ոչ հեռու քան 10 կմ հեռավորությամբ գտնվող վայրում: Տվյալ շենքը պետք է ունենա մաքուր սանհանգույց՝ համապատասխան պարագաներով:

Լսարանի/դասասենյակների՝ հյուրանոցից հեռու վայրում գտնվելու դեպքում պետք է ապահովվի մասնակիցների տեղափոխումը տվյալ վայր և վերադարձը՝ հարմարավետ ավտոբուսներով: Առաջնորդների դասընթացի համար նախատեսված լսարանը պետք է ունենա 35, պարի համար նախատեսված սրահ-դասասենյակը՝ 25, երգի համար նախատեսվածը՝ 10 նստատեղ: Դասերի համար նախատեսված լսարանը և սրահ-դասասենյակները պետք է ունենան օդորակիչ, գրատախտակ, կավիճ/մարկեր, ունենան տեխնիկական ապահովում՝ պրոյեկտոր, էկրան, համակարգիչ, բարձրախոս և ձայնային տեխնիկա, A4 ֆորմատի սպիտակ թուղթ: Երգի դասընթացի համար նախատեսված սենյակում պետք է լինի օգտագործման համար պիտանի դաշնամուր (լարված), պարի համար նախատեսված սենյակը պետք է համապատասխանի պարի դասերի անցկացման համար նախատեսված պայմաններին և այլն:
Պարի դասասենյակում ապահովել 20 տուփ թաց անձեռոցիկ (200 հատ), 5 չոր փաթեթ-անձեռոցիկ (ռուլոն), 10 շիշ սպիրտային հեղուկ:
Անհրաժեշտ է նաև դասընթացների նախավերջին՝ 13-րդ օրը պարի ուսուցիչների և երգչախմբերի ղեկավարների կողմից ներկայացվող համերգ-ստուգատեսի անցկացման համար ապահովել 50 հոգու համար նախատեսված նստատեղով դահլիճ՝ ընտրությունը համաձայնեցնելով Պատվիրատուի հետ:
Դասընթացների բացման օրը լսարանի/դասասենյակի նախասրահում մասնակիցների գրանցման համար պետք է ապահովել համապատասխան սեղանների և աթոռների առկայություն, որոնց վրա նախապես տեղադրված լինի յուրաքանչյուր մասնակցի համար նախատեսված փաթեթ՝ 60 հատի հաշվարկով, որի մեջ պետք է լինեն՝ թղթապանակ, ուղեցույց-նոթատետր՝ յուրաքանչյուր դասընթացի ծրագրի ներառմամբ, անվանակ/բեյջ/, գրիչ:

Նշված փաթեթները ապահովելու համար դասընթացի մասնակիցների և կազմակերպիչների համար անհրաժեշտ է պատրաստել 60 օրինակ թղթապանակ, յուրաքանչյուր դասընթացի անվանումով ուղեցույց-նոթատետր, անվանակ/բեյջ/, գրիչ:

Թղթապանակը պետք է լինի ներսի կողմից ուղիղ կամ թեք գրպաններով- A4 ֆորմատի փաստաթուղթ դնելու համար, գրպանը և թղթապանակը պետք է պատրաստված լինեն մեկ ամբողջական թղթից: Թղթի տեսակը՝ կավճապատ, բարձր որակի, թղթի զանգված՝ 300գր, չափսը՝ բացված վիճակում -A3, 2 տեղից ծալվածքով, տպագրությունը՝ միակողմանի գունավոր:
Ուղեցույց-նոթատետրը պետք է լինի A5 չափի, գունավոր, կազմը՝ կավճապատ, առնվազն 260 գրամանոց թղթից, որը պետք է ունենա դասընթացների անվանումը/կամ պատվիրատու գերատեսչության տարբերանշանը, ուղեցույցի միջի թուղթը պետք է լինի առնվազն 120 գրամանոց, տպագրությունը՝ 1+1, որը բաղկացած կլինի 46 էջից՝ ըստ պատվիրատուի կողմից տրամադրված տեքստի:

Անվանակը/բեյջը/ 'պլաստիկ բեյջ սեղմակով, A6 չափի:

Գրիչը՝ գնդիկավոր, կապույտ:

Թղթապանակի, ուղեցույց-նոթատետրի, անվանակի/բեյջի/ դիզայնը և վերջնական տպագրությունը պետք է նախապես համաձայնեցնել Պատվիրատուի հետ:

Յուրաքանչյուր դասասենյակի լսարանի նախասրահում պետք է տեղադրված լինեն դասընթացների անունը կրող ոտնակով շարժական ցուցապաստառ /բաներ/՝ 1.0մ*2.0մ չափի,ընդհանուր թիվը՝ 3, գունավոր, պոլիէստիրոլից, 260 գ. Խտությամբ, որոնց դիզայնը և վերջնական տպագրությունը պետք է նախապես համաձայնեցնել Պատվիրատուի հետ:
Անհրաժեշտ է մասնակիցների համար ձևավորել և տպագրել դասընթացի մասնակցության 60 հավաստագիր: Հավաստագրերը պետք է պատրաստված լինեն A4 չափի գունավոր, կավճապատ, առնվազն 260 գրամանոց թղթից, որոնք պետք է ունենան ծրագրի և/կամ պատվիրատու գերատեսչության

տարբերանշանը, որոնց վերջնական տեսքը պետք է համաձայնեցնել պատվիրատուի հետ:
Ծրագրի աջակիցների համար հարկավոր է պատրաստել և տպագրել 25 շնորհակալագիր: Շնորհակալագրերը պետք է պատրաստված լինեն A4 չափի, գունավոր, կավճապատ, առնվազն 260 գրամանոց թղթից, որոնք պետք է ունենան ծրագրի և/կամ պատվիրատու գերատեսչության տարբերանշանը, որոնց վերջնական տեսքը նույնպես պետք է համաձայնեցնել Պատվիրատուի հետ:
Դասընթացների մասնակիցների, աջակիցների և դասընթացավարների համար պետք է մինչև ապահովել մինչև 60 հատ հայկական խորհրդանշական հուշանվերներ և մինչև 5 ծաղկեփունջ, որոնք պետք է համաձայնեցնել Պատվիրատուի հետ:

2. Ծրագրի մշակութային,ժամանցային ու ճանաչողական բաղադրիչը պարտադիր պետք է ներառի՝

- 13 օրերի ընթացքում մինչև 60 մարդու հաշվարկով մասնակիցների այցելություններ՝ երևանյան հաստատություններ, տեսարժան վայրեր՝ /այդ թվում՝ Եռաբլուր, Ծիծեռնակաբերդ, թանգարան, ժամանցային վայր, թատրոն/ օրական 20-25 կմ Երևան քաղաքի մեջ տրանսպորտային տեղափոխությունների ապահովմամբ,
- 1 էքսկուրսիա մինչև 400 կմ ընդհանուր հեռավորությամբ՝ մեկնում և վերադարձ /Երևան-մարզ-Երևան/,
- 5-6 հանդիպում հեղինակավոր պետական, հասարակական, մշակութային գործիչների հետ, որոնց ընտրությունը պետք է համաձայնեցվի Պատվիրատուի հետ:

Ուղևորությունների ընթացքում տրանսպորտային միջոցները/ավտոբուսները/ պետք է լինեն 2006-ից ոչ շուտ արտադրության, տեխնիկապես՝ անթերի, հագեցված լինեն օդակարգավորման համակարգով, սառնարանով, բարձրախոսով: Տեխնիկական անսարքության դեպքում տրանսպորտային միջոցը առավելագույնս արագ ժամկետում պետք է փոխարինվի համանման մեկ ուրիշ միջոցով:
Մասնակիցներին տեղափոխող ավտոբուսի արտաքին դիմապակուն պետք է փակցվի A3 չափսի պաստառ՝ Պատվիրատուի կողմից տրամադրված տեքստին համապատասխան:
Ցանկացած ուղևորության ժամանակ, այդ թվում քաղաքի ներսի տեղափոխությունների ժամանակ, ավտոբուսներում 60 մարդու հաշվարկով պետք է ապահովել 0.5 լիտր սառեցված վիճակում շշալցված ջուր (յուրաքանչյուրին 2 հատ):
Եռաբլուր և Ծիծեռնակաբերդ այցելությունների համար մասնակիցների և ուղեկցողների համար ապահովել ծաղիկներ՝ 2-ական բնական ծաղիկ՝ մեխակ՝ յուրաքանչյուր վայրի համար՝ 120, ընդհանուր 240 մեխակ:
Դասընթացի տևողության 13 օրերի ընթացքում անհրաժեշտ է ապահովել 3 անգամյա սննդի մատուցման ծառայություն՝ առավելագույնը 60 մարդու համար: 14-րդ օրը հարկավոր կլինի ապահովել միայն նախաճաշ: 3 անգամյա սննդի մատուցումը պետք է իրականացնել ըստ սահմանված ժամերի՝ նախաճաշ՝ 7:30-8:30, ճաշ՝ 14:00-15:00 և ընթրիք՝ 19-:00-20:00: Ընդ որում, նախաճաշի մատուցումը պարտադիր պետք է ապահովել մասնակիցների կացության հյուրանոցում: Մատուցվող սնունդը պետք է համապատասխանի ՀՀ-ում գործող սննդի անվտանգության նորմերի պահանջներին: Մատակարարվող սնունդը պետք է լինի թարմ՝ պատրաստված լինի նույն օրը, յուրաքանչյուր օր նոր ճաշատեսակով՝ համաձայնեցնելով պատվիրատուի հետ: Պահանջվելու է ապահովել հայկական խոհանոցին բնորոշ ճաշատեսակներ, ընդ որում օրվա ռացիոնի մեջ պետք է լինեն 2 տաք, 1 սառը ճաշատեսակ, մսի և պանրի տեսականի, 2 տեսակի աղցան, ձիթապտուղ, կարագ, ջեմ/ մեղր և այլ անուշեղեն, ոչ ոգելից ըմպելիքներ, ջուր, հաց, թեյ, միրգ, խմորեղեն, պաղպաղակ:
Առանձին դեպքերում, Երևանից դուրս ուղևորությունների ժամանակ, անհրաժեշտ է ապահովել ճաշի պիկնիկային տարբերակը:
Ընթացքում, անհրաժեշտությունից ելնելով ,Ծրագրի պատվիրատուի պահանջով կարող են այցելությունների օրերը և ուղղությունները մասնակի փոփոխություններ կրել:

Դասերի 13 օրվա ընթացքում սուրճի ընդմիջումների ժամանակ ներկաների համար /մասնակիցներ, դասախոսներ և կազմակերպիչներ/՝ յուրաքանչյուր դասընթացի համար նախատեսված սենյակի հարող հատվածում, ըստ համապատասխան քանակի, հարկավոր է ապահովել խմելու ջուր, բաժակ, սուրճ, թեյ, շաքարավազ, խմորեղեն՝ ընդհանուրը՝ 60 անձի հաշվարկով:
Դասընթացների բացման առաջին օրը անհրաժեշտ է հյուրանոցում կազմակերպել ֆուրշետ-ընդունելության արարողություն /տաք և սառը ուտեստներ, սուրճ, թեյ, հյութ, խմելու ջուր, հանքային ջուր, գինի, միրգ, խմորեղեն/ 70 մարդու համար, որը կներառի նաև ողջույնի խոսքեր, ելույթներ, երաժշտություն:
Ընդունելության արարողության սցենարը, կատարողներին, հաղորդավարին և ճաշացանկը պետք է նախապես համաձայնեցնել Պատվիրատուի հետ: Ընդունելության երաժշտական հատվածը պետք է ապահովվի ջազ բենդի 1 ժամ տևողությամբ կատարումներով: Ստեղծագործությունները պետք է նախապես համաձայնեցվեն պատվիրատուի հետ: Միջոցառման կազմակերպման համար անհրաժեշտ է ձայնային և լուսային տեխնիկայի առկայություն, անլար բարձրախոս՝ 2 հատ, էլեկտրոբարձրախոս /դինամիկ/՝ առնվազն 50 կվտ հզոր:
Դասընթացների ավարտման նախավերջին՝ 13-րդ օրը, պետք է կազմակերպել ավարտական ընթրիքի հանդիսություն՝ առավելագույնը 80 մարդու համար /50 մասնակից, 30՝ կազմակերպիչներ, հյուրեր,

	դասախոսներ/: Ավարտական ընթրիքի հանդիսությունը պետք է անցկացնել /Երևան քաղաքում/ հետաքրքիր ժամանցային վայրում՝ ապահովելով հաղորդավարի, երաժշտության և DJ առկայություն: Ավարտական ընթրիքի արարողության սցենարը, հաղորդավարին, ճաշացանկը պետք է նախապես համաձայնեցնել Պատվիրատուի հետ: Դասընթացների ողջ ընթացքը պետք է տեսանկարահանվի և լուսանկարահանվի, այնուհետև իրականացվի տեսանկարահանված նյութի մոնտաժում, տեսաֆիլմի պատրաստում և լուսանկարների հետ համապատասխան կրիչով տրամադրվի Պատվիրատուին: Անհրաժեշտության դեպքում, տեսաֆիլմը պետք է վերախմբագրվի Պատվիրատուի պահանջով և վերջնական տարբերակը համաձայնեցնել Պատվիրատուի հետ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ
Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011039063
ՀՎՀՀ 02505554

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«ԼՈՌԵ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ
ք. Ստեփանավան, Չարենցի 179/28
«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ
Հ/Հ 16033015694600
ՀՎՀՀ 06952546

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 2
« 26» հուլիսի 2019թ. կնքված
N ՀՀՎԱ-ՀՄԱ-ԾՁԲ-19/35-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	79951110/5	Մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայություններ	-	-	-	-	-	-	-	24 980 000	24 980 000	24 980 000	24 980 000	24 980 000	24 980 000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ
Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011039063
ՀՎՀՀ 02505554

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«ԼՈՌԵ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ
ք. Ստեփանավան, Չարենցի 179/28
«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ
Հ/Հ 16033015694600
ՀՎՀՀ 06952546

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 3
« » հուլիսի 2019թ. կնքված
N ՀՀՎԱ-ՀՄԱ-ԾՁԲ-19/35-1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
« » հուլիսի 2019թ. կնքված
N ՀՀՎԱ-ՀՄԱ-ԾՁԲ-19/35-1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 2019 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն